ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ -3-Ե- 3787

« 06 » մայիսի 2022թ.

ՔՐՈՈՒ ԸՆԴ ԱՍԱՏՐՅԱՆՍ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ԱՍԱՏՐՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-22/05» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում՝ Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև ընկերություն) կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

ա) ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող՝ ընկերության կողմից հաստատված **ծառայության մատուցման առանձին տարրերի գնացուցակը** (գնացուցակի օրինակելի ձևը կցված է հրավերին),

բ) ներկայացված հայտում առկա լիազորագրում նշված Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի տնօրեն Ալբերտ Ասատրյանի անձնագրի սերիան չի համապատասխանում հայտով ներկայացված՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի (Հավելված 1.2) (այսուհետ՝ Հայտարարագիր) «4. Իրական շահառուի տվյալները» բաժնի «4.2. Անձը հաստատող փաստաթուղթը» ենթաբաժնի «4.2.2. Փաստաթղթի համարը» դաշտում, ինչպես նաև էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարության (Հավելված N1) 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված նույն անձի անձնագրի սերիային: Ընդ որում, հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի «ե)» պարբերությամբ սահմանված է, որ դիմում հայտարարության 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը չի լրացվում,

գ) էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունում ընկերության գործունեության հասցեն նշված է ոչ ամբողջական,

դ) Հայտարարագրի «4. Իրական շահառուի տվյալները» բաժնի «4.1. Անձի ինքնությունը հավաստող տվյալները» ենթաբաժնի «4.1.5. Քաղաքացիությունը» դաշտում նշված տեղեկատվությունը անհրաժեշտ է համապատասխանեցնել իրական շահառուի անձնագրում նշված համապատասխան տեղեկատվությանը:

Միաժամանակ հրավերով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի լրացման կարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ հայտարարագրի «4.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնի **«4.7.3. Ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ»** դաշտի տեղեկատվությունը վերաբերում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձանց, ուստի հաշվի առնելով, որ ընկերության կողմից լրացված են Հայտարարագրի «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը **(բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)**» ենթաբաժնի համապատասխան դաշտերը, տվյալ դեպքում հայտարարագրի **4.7.3.-րդ** դաշտում կատարված նշումն ավելորդ է:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-22/05» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **մայիսի 10-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-22/05» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788